

ՀԱՍՏԵ
N. ARCHAM
Pos'e Restane
ATHENES (Grèce)

Խմբագրութեանս ուղղուած նամակ
կամ այլ գրութիւնքս չեն զրկուիր:
Յօդուածներու պատշաճ դատուած-
ները միայն պիտի հրատարակուին:

ՄԻՈՒԹԻՒՆ

ԲԱԺՆԵԳԻՆ

Ամէն տեղերու համար գինն է
Տարեկան արծաթ ֆրանք 5
Վեցամսեան » » 3
Բաժնեգինները կանխով վճարելի են:
Փոսթին ծախքը խմբագրութեան
կը պատկանի:
Մանուցումներ կ'ընդունուին դիւրա-
մատչելի գիններով:

Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ս Կ Ա Ն

Ա- ՏԱՐԻ

ԱԹԵՆՔ

1897

ՄԱՅԻՍ

ԹԻՒ 7

ՊԱՏԵՐԱԶՍ

Յունաստանը հակառակ իր վա-
ռար անցեալին և հակառակ զօր-
քերու ցոյց տուած անասանքի քա-
ջարտութեան դժբաղդաբար նիւթա-
կան և բարոյական ձախող պարտու-
թիւն մը կրելով ամբողջ ազգը խոր
տրտութեան ու սուգի մէջ գտնու-
ած էր, ի նորէն Տեղեանի նա-
խարարութեան, որ իր կարճատե-
քաղաքականութեամբ առանց նա-
խապարտաստութեան և առանց իս-
կապէս պատերազմելու նպատակ ու-
նենալու (ինչպէս ինք կը խոստովա-
նի) պատճառներ տուաւ թուրքին
հետ քաղաքական յարաբերութիւնը
խզելու և պատերազմի հրատարա-
կութեան: Պ. Տեղեանի նոյնը ըրած
էր 1886 թուականին, պատերազմ
հրատարակելով թուրքին դէմ, ուղած
էր լոկ սպառնալիք մը ընել և Պէր-
լինի դաշնագրութեամբ Յունաստանի
պատկանող յօդուածներու տրամադ-
րութիւնը ձեռք բերել, այս նպատա-
կով 45000 զօրք ի զէն կոչած ամիսնե-
րով շարժուի միմեկի մէջ պահելով
անպիսի պարտքի մը տակ թողած էր
կառավարութիւնը: Եւրոպական պե-
տութեանց զեապանները քանիցս
ջանքեր ըրած էին կասեցնել զինքը
այդ նպատակէն, բայց իր յամառու-
թիւնը անմիջապէս առաջ բերաւ ևւ-
րոպական պաշարումը, և ապա հե-
ռացաւ նախարարութիւնէն:

* *

Այս անգամ ալ Պ. Տեղեանի իր
աններելի թերութեամբ միայնցաւ
գիւտագիտական ասպարէզին վրայ:
Պատերազմի հրատարակութեան օրէն
ի վեր դանդաղ շարժեցաւ, ոչ պա-
հեստի զօրքեր պատրաստեց և ոչ
ալ ըստ բաւականին ռազմամթերք
որպէս զի ի հարկին օգնութեան
զրկէր:

Թրնօվա թշնամոյն կողմէն զը-
րաւունքէն յետոյ յոյն զօրաբանակը
ստիպեալ ետ քաշուեցաւ և Լարիսայի
առջև Մաթի ըստած տեղը կազմե-
լով իր բանակատեղը ամրացաւ, իսկ
գահաժառանգ իշխանը իր հրամա-
նատարութեան էկզերոնը միտադրե-
լով հաստատեց Ֆէրասայի մէջ:
Աւագ-Հինգլաքթի և Ուրբաթ օրերը
թշնամին բազմաթիւ զօրքերով յար-
ձակում ըրած և պատերազմի դաշտին
վրայ հարկաւոր չէ հ հ ի տ ներ թո-

ղելով նահանջած էր: Իսկ ուրբաթ
երեկոյին սկսաւ սաստիկ պատերազմ
մը, որուն մէջ յոյն զօրքերը ամ-
բողջ 8 ժամ շարունակաբար քաջու-
թեամբ պատերազմելով (ինչպէս կը
խոստովանի էթէմ մաչան) յաջո-
ղած էին իրենց զիջքը պահպանել:
Բայց չորս ժամուան զինադադա-
րումէն յոյն զօրքերը հազիւ սակա-
ւինջ հանգիստ առած էին, յանկարծ
արշաւոյսին թշնամին բանակը կը
տեսնուի 65000 զօրքերով: Յոյն զօրա-
բանակի հրամանատարը դիմադրու-
թիւնը անկարելի համարելով խո-
հեմութիւն համարած է թողուլ
Լարիսան և ամրանալ Ֆէրասայի
մէջ ուր կը մնար գահաժառանգ
իշխանը, դժբաղդաբար այս կերպով
Ֆէրասան և Վէլեստինէն ալ թողե-
լով այժմ համախմբուած և ամրա-
ցած են Տոմորոյի մէջ: Վատ թըշ-
նամին Գերմանիոյ և Ռուսիոյ նիւ-
թական ու բարոյական աջակցու-
թեամբ ամբողջ թեսալոյ տիրելով
յաջողեցաւ հասնել Հին սահմանա-
գիծը: Ո՞վ է պատասխանատուն,
Պ. Տեղեանի՝ անշուշտ երբ որ
պատերազմի աղմուկով կատակեր-
գութիւն կ'ընէր, միտաւ կողմէ թըշ-
նամին սպառնալիքով հաղաբաւոր
զօրքեր կը հասցնէր սահմանադը-
րուի: Այժմ սկսած է մեծ տէրու-
թեանց բանակցութիւնը միջամտելու
համար, որը իթէ նպատաւոր լինի
Յունաստանի. կարելի է հաշուու-
թիւնը, իսկ հակառակ պարագային
կը մնայ նոր նախարարութեան կամ
ընդհ. զինուորապետութեամբ մը մինչև
վերջին շունջ գիւտագիտել և թշնամին
թեսալոյսէն վանել և կամ պար-
տուելով ևւրոպացիներու միջամտու-
թիւնը խնդրել:

ՄԵՐ ՃԱՄԲՈՐՈՒԹԵԱՆ ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հիլլէն և Թուրք կառավարու-
թիւններուն միջև քաղաքական յա-
րաբերութիւնները խզուելէն անմի-
ջապէս յետոյ պատերազմ հրատա-
րակուեցաւ: Թուրք կառավարութեան
կողմէն Յոյնները թէ Թեսալոյս
Եպիքրոսի սահմանադրութեան վրայ
կամատրնելն ալ հաշուելով զրեթէ
հազիւ 65 հազար զօրք համախմբած
էին, միևնոյն ժամանակ երկու տե-
ղերէն ալ կուր սկսաւ յորում յոյն
զօրքերը արիւրաբար կուռելով երկու
կողմերէն ալ կը հաղածէին թշնամին:

Թ առաջ կերթային դրաւելով անսնց
մի քանի պահակախոցները: Այդ օրե-
րը ուրախաւիթ և խիստ երջանիկ
էին Յունաստանի համար, զինուո-
րական շարժումը, ժողովրդի հայրե-
նասիրական եռանդը և ոգեւորու-
թիւնը անկարելի էր նկարագրել:
Ամեն օր զանազան հեռաւոր երկիւ-
րեքէ յոյն և օտարազգի հազարա-
ւոր կամաւորներ կը հասնէին, որոնք
ուրախ զուարթ «կեցցէ պատերազմ»
գոչելով ման կուգային փողոցնե-
րը զրօշակներով և նուագներով:
Միւս կողմէն լրագրաւաճառները,
որ պատերազմի վայրէն յաջողակ
լուրեր հաղորդող յաջորդաբար հրա-
տարակուած յաւելածներով կ'աղ-
մէին քաղաքը, այնպէս որ Աթէնքը
զարձած էր մի որոշ զուարճատեղի
և փառաւոր հանգիստաւայր:

Տեսնելով յունաց այս յաջողու-
թիւնները որոշեցինք անձամբ եր-
թալ պատերազմի վայրը. կուր մօ-
տէն քննելու և մեր պատ. ընթեր-
ցողաց զուտ լուրեր հաղորդելու բաղ-
ձումը Աւագ Հինգլաքթի ճամբոր-
դելիքը թեսալոյ վճռաբար անկէ
ալ Լարիսա երթալու համար: Շո-
ղենաւին մէջ պատիւ ունեցանք տե-
սակցելու յոյն յեղափոխականաց աս-
պատակային խմբապետ Թաքի հետ,
որ Մակեդոնիա քանի մը անգամ
մտած ելած թուրքերը սարսափե-
ցնող նշանաւոր գործիչ մըն է,
այս անգամ նոր խումբ մը կազմա-
կերպած դարձեալ կ'երթար սահմա-
նադրուս պատերազմելու, իր հետ
ունենալով շատ մը խալաքի կամա-
ւորներ: Երիտասարդ յեղափոխականը
իր պարզութեամբ համակրելի էր, իր
գեղջկական աղտոտ հագուստով և
գաւառական բարբառով կը խօսէր
մեզ հետ առանց հպարտութեան և
պոռոտախօսութեան: Իր խօսքը դար-
ձուց հայ յեղափոխութեան վրայ ը-
սելով թէ՝ «զուր հայերդ թուրքին դի-
մադրելու և ձեր նպատակը իրապո-
ծելու համար պէտք էր ձեր մայրենի
երկրին մէջ զանազան լեռներու վրայ
ասպատակային խմբեր կազմելը և
աւտղակային կուռներ մզելը թուր-
քին դէմ 5-6 հարիւր քաջերով, այս-
պէս աւելի մեծ արդիւնք առաջ պիտի
կրնայիք բերել, քան թէ Պոլսոյ մէջ
եղած կրկնակի ցոյցերը, որոնք բոլ-
րովին վնասակար եղան»:

Վերջապէս Աւագ ուրբաթ երեկոյ
հասանք Վճռա, երկիրը բարեբեր և
վաճառաշահ նոր բաղաւթ մըն է 12000
բնակչով, Հին Վճռա ըստած թաղ մըն
ալ ունի թրքաւան ճաշակով, ազատ
փողոցներով ու Հին տուններով, մէջ
տեղն ալ մըզկիթ մը, այս թաղին
մէջ կը բնակին եղեր թուրքերը
որոնք պատերազմի հրատարակութեան
օրէն թողելով իրենց տունները և խա-
նութիւնները խոյս տուած են:

Փոքրիկ Հայ գաղթականութիւն
մըն ալ կայ ար հետաւորներ և բեռ-
նակիրներէ բաղկացեալ որոշ քաւա-
կան դահաջուցի վիճակ մը ունին
եղեր պատերազմէն առաջ, ծխախոտի
վաճառական Պ. Գ. Սարգիսեան,
որ ժամանակէ մը ի վեր հոտ հաս-
տատուած է, կոտորածէն յետոյ
փախստական հայ կարօտեւոց չէ խը-
նայած իր նիւթական և բարոյական
աջակցութիւնը: Մեր ժամանակէն
օր մը առաջ 28 հայ կամաւոր զօր-
քեր այդ նահանգիստը հասնելով,
անոնցմէ միեկի լեզուալէա Պ. Մե-
քոնը՝ որ շատ մը երկիրներ պատած
է այս անգամ Ռուսաստանէն եկած
էր, գաղղիերէն լեզուով Հայկական
սրճարանին դուռը հայ յեղափոխու-
թեան վրայ բանախօսութիւն մը ըրած
և բազմաթիւ յոյներէ և խալաքիներ-
րէ ծափահարութեամբ ընդունուած
է յոյն զօրապետներուն խիստ հա-
մակրելի դարձած է:

Այդ օրը երբ մենք հասած էինք
ընդհ. անդորրութիւն կը տիրէր,
ժողովուրդը հանդարտ և ուրախ էր,
գիշերը անցուցինք, Հետեւեալ օրը
Աւագ շաբաթ էր, երբ իմանք շուկայ
ժողովրդին մէջ արտասովոր յուզում
և խլրտում մը կար, դէմքերը տխուր
և խանութները փակ, գրեթէ ամբողջ
քաղաքը սուգի մէջ էր, ժողովուրդը
փողոցներու մէջ լեցուած կ'ուզէր
ստոյգ լուր մը ստանալ թէ ինչ ե-
ղած է սահմանադրութիւն վրայ, միև-
նոյն ժամանակ երկաթուղին շարու-
նակ երթեկեկելով Լարիսայէն կը բե-
րէր բազմաթիւ վիրաւորեալ և փա-
խստական տղամարդեր: Ժամեր չան-
ցան լսեցինք վերջապէս թշնամոյն
Լարիսա մանկուսն դոյժը: Բաղաքին
մէջ սարսափը տիրեց, բազմաթիւ
տարաձայնութիւններ աւարժուեցան
որպէս թէ նոյն օրը թշնամին երկա-
թուղիով Վճռա պիտի հասնի, գաղ-
թողներու թիւը անհամար էր, շոգե-
նաւները կառավարութեան վարձ-
ձուած ըլլալով բացի վիրաւորեալնե-
րէն ուրիշ մարդ չէին առնել, քանի
մը օր մնացինք առանց շոգենաւի,
երբ լսեցինք թէ թուրքերը Վէլեստի-
նօ կը հասնին, որ երկու ժամ հեռա-
ւորութիւն ունի, ստիպեալ հեռա-
ցանք առագաստանաւակով մը և հա-
սանք մօտակայ քաղաք մը, ուր չու-
ղենաւի սպասելով հայրու կըցանք
հասնել Պիլէոն: Մեր հեռախոսէն
յետոյ էթէմը իր զօրքերուն մէկ
մասը զրկեց մինչև Տօմորո ուր կը
գտնուի այժմ յոյն զօրաբանակը և
մէկ մասն ալ Վճռա մոցուց առաջ-
նորդութեամբ Աթէնքի թրքական
զեապանատան նախկին զինուորական
կցորդ Շէյքուլլահի և Վճռա քաղա-
քին մէջ ծածանեց թրքական աղտոտ
չարը:

Արդարեւ տխուր տպավորութիւն մը ըրաւ մեր վրայ հաղարաւոր տըղամարդերու արտաճմիկ վիճակը, որոնք միակ իրենց կեանքը բարբարոս թուրքին արէն փրկելու համար նաւամատոյցը դիմած լալով ողբալով նաւի կը սպասէին, այս խեղճ արարածներն ալ վերջապէս մեր դըժբաղդ հայերուս դժբաղդութեանց վիճակակից եղան և զոհ գացին մեզի նման ի շնորհս եւրոպական և մանաւանդ ուսոս-գերմանական անխիղճ քաղաքականութեան:

ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ

Թէեւ նախորդ թուով գրած էինք թէ այս անգամ մեր ծրագիրը պիտի ներկայացնենք ընթերցողներու, բայց տեսնելով որ շատերը սխալ հասկացողութեամբ կարծեւ են թէ այս ծրագրով մենք նոր կուսակցութիւն մը կազմելու գաղափարը յղացած ենք, բան մը որ երբեք մեր մտքէն անցած չէ, առ այժմ կը յետաձգենք այդ ծրագրի հրատարակութիւնը: Այսօր հանդերձ կ'ուզենք վստահացնել մեր պատ. ընթերցողները թէ մեր հրատարակելիք ծրագիրը պարզապէս կուսակցութիւններու մէջ միութիւն առաջ բերելու համար ղանազան միջոցներ և առաջարկներ էր և ո'չ այլ ինչ:

Սուրբ աղբիւրէ կը տեղեկանանք թէ նորէն Հնչակեան և Դաշնակցական կուսակցութիւնները բանակցութեան սկսած են միութիւն առաջ բերելու համար: Մաղթենք որ այդ խորհուրդը նորէն չվիժի:

Մենք առ այժմ չէզոք դիրք մը կ'առնենք և կ'սպասենք բանակցութեան ելքին:

ՆԱՄԱԿ ԷԶՄԻԱԾՆԵՆ

Ապրիլ 14, ՎԱՍՊՈՇԱՊԱՏ

Պաթուկէն մինչև Էջմիածին հայ գաղթականներով լեցուած է: Ձարին հրամանով Ռիֆիդի մէջ հաստատուած է Թարեգործական Ընկերութիւն մը նպաստելու համար կարօտ գաղթականներուն: Նպաստ տըւողները ամեն մէկ քաղաքի մէջ կառավարութեան կը յանձնեն իրենց նուէրները, ուսկից ուղղակի կը դըր-կուի Բարեգործական ընկերութեան որով բաւականի կ'օգտուին խեղճ գաղթականները:

Ս. Էջմիածնի վանքը Վաղարշապատէն 5-10 վայրկեանի չափ հեռու է, կառավարութիւնը կը պահանջէ որ ձեռքը անցադիր ունեցող գաղթականը միայն երեք օր մնայ վանքին մէջ, իսկ անցադիր չունեցողներուն արգելուած է բնաւ վանքը մնալ: Վանքը ունի թանգարան, տպարան, պատիկ ու հին հիւանդանոց մը և Գէորդ կաթողիկոսի հաստատած ձեմարանը, իրմէն քառորդ ժամ հեռու են Շողակաթի, Գայիանէի Հոփիսիմէի վանքերը, առաջինը կարելի է չէն համարել, իսկ վերջի երկուքը՝ թաղանթներու բոյն դարձած աւերակներ են: Էջմիածնի վանքը աղքատ չէ, բաւական արգասանդ հողեր և եկամուտներ ունի, բայց յամառ և բախտախնդիր կրօնականներու վնասակները, գայլերու պէս ամէն ինչ կը լափեն, հոս աւելի մեծ թուով կը վիտան—Բաղդադիմէոսի և Ալըզի պէս անարժաններ—, որոնք

քահանայական սքեմին տակ ինչ տեսակ զեղծումներ ու վատութիւններ անխղճաբար կը գործեն: Հայոց Հայրիկն ինկած է այս անարժան կրօնականներուն վնասակին մէջ, որոնք միշտ Հայ ազգին արասաւորիչ ու աւերիչ ցեցն եղած են: Էջմիածնի շուրջը կը տիրէ ողորմելի վիճակ մը յամառ կղերիկու և յիմար ժողովուրդներու միջև, որոնք մանրամասնաբար թուելը շատ վերաբորիչ է ազգային փառքին ու կրօնքին նախանձախնդիրներուն:

Պարսկաստանի մէջ ալ նմանապէս շատ թշուառ գաղթականներ ունին, որ ըստ բաւականի դրամական նպաստներ կ'ըստանան Թիֆլիզի Բարեգործական ընկերութիւնէն: Կ. Պ.

Ե Ի Ր Պ Պ Ա

և Լ

ՅՈՒՆՈ-ԹՐԲԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

«Յաւելուած» Նի Նոր թուի առաջին էջին մէջ «Պետութեանց անհամաձայնութիւնը» վերնագրով մեր քաղաքական յօդուածը ամփոփած էինք հետեւեալ խօսքերով. «Այս օրուան խնդիրն ոչ կրետական և ոչ ալ Հելլենո-Թրքական, այլ Արեւելեան խնդիրն իր ամբողջութեամբ պարզուած և դարձած է Եւրոպական խնդիր, հետեւաբար մենք գոնէ այնպէս կը գուշակենք թէ՝ Թուրքո-Հելլենական պատերազմը տեղի չպիտի ունենայ, քանի որ մեծ տէրութիւնները պատերազմէ խոյս կուտան և խաղաղութիւն կը գոչեն: Իսկ եթէ հոս սահմանադիւրի վրայ հրացանաձգութիւնը սկսի և անսխալապէս միջազգային դեպքանախորհրդով մը գումարուելով վստահին առաջը չառնուի, այն ատեն Անգլո-Ռուսական կամ ընդհ. եւրոպական պատերազմն անխուսափելի կը համարինք»:

Մեր այս գրածը այժմ կը հաստատեն եւրոպական թերթերն ալ թէ Անգլո-Ռուսական քաղաքական յարաբերութիւնները զգալի կերպով ցրտացած են, ամենափոքր պատճառ մը կրնայ սպառնալ եւրոպական տէրութեանց խաղաղութիւնը վրդովել և Անգլո-Ռուսական պատերազմի մը ծագում տալ:

Դադլիա՝ հեռանալով Ռուսիոյ դաւադիր և խորամանկ քաղաքականութեանց սկսած բարեկամաւոր Անգլիոյ հետ, տեսնելով Գերմանիոյ և Ռուսիոյ միջև գոյացած համեմատելիութիւնը և անոնց բարեկամական կապերու օր ըստ օրէ ամրապնդումը:

Արեւելեան խնդրուն մէջ Անգլիոյ որոշումներն այս անգամ վճռական կը տեսնուի: Հայկական խնդրին մէջ Լօպանովի կերած ապտակը տակաւին չի մարսած երկրորդ ապտակ մըն ալ Յունո-Թրքական գործերուն մէջ Մուրադիէֆէն չի պիտի ուղէ ուտել, ինչպէս ցոյց կուտան պարագաները:

Եւրոպիոյ դիւանադիտական դահլիճները, Յունո-Թրքական պատերազմին վերջ տալու համար, յետ երկար բանակցութեան ինքնաբերաբար համիմաստ պաշտօնական ղեկուցադիր մը տալով միջամտել առաջարկեցին երկու պատերազմող տէրութիւններու, որը՝ Յունաստան ընդունեցաւ, իրեն վերապահելով պայմաններու ուղարկութեան արժա-

նի կէտերու վրայ դիտողութիւնները, իսկ Բ. Դուռը խոտացած է խնդիրը լաւ մը ուսումնասիրելով Պայրամէն վերջ պատասխանել:

Յայտնի է թէ Թուրքիա կը շարժի Ռուսիոյ և Գերմանիոյ խորհրդով, որոնց միայն կը պարտի իր պատերազմական կէս յաջողութիւնը:

Թուրքիա՝ Յունաստանէն կը պահանջէ 300,000 հազար ֆրանք, իբրեւ պատերազմի տուգանք, երաշխաւորեալ Թեսալիոյ եկամուտներով, որը արդարացի համարելով Ռուսիա և Գերմանիա, կը պնդեն թէ հարկ է դրամական հատուցում մը ընել տալ Յունաստանին: Այս առթիւ Աւստրիա տակաւին և ոչ մի դիտողութիւն ըրած չէ, իսկ Անգլիա, Գաղղիա և Իտալիա Յունաստանը պարտուած չհամարելով՝ ընդհակառակը կը յայտարարեն թէ՝ Թուրքիա առանց բան մը պահանջելու, պէտք է քաշուի Թեսալիայէն, որովհետեւ պատերազմի հրատարակութենէն առաջ նախապէս երկու կառավարութեանց ալ ծանուցուած էր թէ եթէ պետութեանց ջանքերու հակառակ պատերազմի սկսին, երկուքէն որն ալ յաղթէ, առանց բան մը ձեռք բերելու յետ պիտի դառնայ: Ուրեմն չէ որ Թուրքիա նախապարձակ եղաւ, և ո՞ր պատերազմի մէջ յոյները պարտուեցան չէ՞ որ եւրոպացի պետութեանց խորհրդով յունական նաւատորմի որ մինչև այսօր գործած դեր մը չկատարեց ոչ Սէլանիկի, ոչ Իգլիթի և ոչ մի թրքական ծովեզերեայ քաղաքի վրայ: Թուրքիա պատերազմական ծախքերու հատուցում կ'ուզէ 200 միլիոն ֆրանք, ինչ իրաւունքով, հակառակ միջազգային օրէնքի թեսալիոյ մէջ ի գործ դրած վայրագութեանց համար, որ բռնած գերիններու շատերը ըստ կենդանոյն այրեց, խանութները և տունները յալածակեց և ամբողջ Թեսալիան փնջացուց:

Թուրքիոյ այս ապօրինի պահանջը (ապօրինի կ'ըսենք, որովհետեւ նահանջումը պարտութիւն չէ և թէ եւրոպացուց միջամտութիւնը ինքնաբերաբար է, ոչ թէ Յունաստանի առաջարկով): Կրնայ յանկարծական ընդհարում մը առաջ բերել Ռուսիոյ և Անգլիոյ միջև. թէ ինչպէս: Եթէ Մեծ Տէրութիւնները համաձայնութեամբ յոյն զօրքերը կրտէսէն և Եւրոպէն, թուրք զօրքերն ալ Թեսալիայէն յետ քաշել տան առանց դրամական հատուցման, խաղաղութիւնը կարելի է: Իսկ եթէ Ռուսիա և Գերմանիա ի նպաստ Թուրքիոյ պահանջեն պնդեն, բնականաբար պատերազմը շարունակել տալով պիտի ջանան թուրքը մինչև Աթէնք բերել, իսկ այդ ատեն է որ Անգլիա դիւանադիտական վերջին պարտում մը չկրկնու համար նախապարձակ պիտի ըլլայ Ռուսիոյ դէմ:

Մեր այս գծած տողերու ստուգութիւնը կը հաստատէ դիւանադիտական տեսակցութիւն մը, որ անցեալ շաբթու տեղի ունեցած է յոյն նախարարի մը և եւրոպական դեսպանի մը միջև, յորում վերջինը յայտարարած է թէ՝ «Յունո-Թրքական պատերազմի շարունակութիւնը եւրոպական պատերազմի ծագման տեղի տալով Յունաստանը պիտի օգտուի»:

Դիւանադիտին այդ յայտարարութեանց կը հետեցնենք թէ՝ եւրոպական պատերազմը անխուսափելի է, յորմէ միայն կրնանք յուսալ

Արեւելեան խնդրոյ վերջնական լուծումը և մեր հայերուս քայքայուած վիճակի բարեկարգումը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Եւրոպիոյ անգլիական հիւպատոսը իր կառավարութեան մատուցած պաշտօնական տեղեկագրով մը կը հաստատէ թէ կոտորածին հեղինակ և թուրք խուժանը թելադրողն եղած է տեղւոյն կառավարիչ Մէհմետ Նադիր փաշա: Հայերը օր մը առաջ հասկնալով արիւնարբու շուններուն նպատակը, իրենց մէջ յանձնաժողով մը կազմելով ներկայացած են անոր խնդրելով իրենց կեանքին և ստացուածքին ապահովութիւնը, փաշան՝ անմիջապէս դուրս գալով փողոցները կը շրջի և նախապէս խուժանը կը թելադրէ և ապա քանի մը արիւն թուրքեր ձերբակալելով առերես կը բանտարկէ և ապա հայերուն դառնալով կ'ըսէ. «Օ՛հ դատակներս, դուրս եկէք, խանութիւնդ բացէ՛ք և դորձերնիդ նույեցէք աներկիւղ. եթէ բան մը պատահի, ես եմ պատասխանատուն»: Խեղճ հայերը միամտաբար, այդ վայրենի դաշանին խոստումներուն հաւատ ընծայելով տներէն դուրս կ'իլլեն և գործի կ'երթան: Միեւնոյն ժամանակ անմիջապէս կ'ենթարկուին վայրենի գազաններուն յարձակման:

Զօրքերը թէև խուժանին ոճրագործութեանց չեն մասնակցած, բայց իբրեւ հանդիսատես ներկայ գտնուած են մեծ անտարբերութեամբ:

Բարիգէն կը հեռագրեն թէ՝ հասարակութեան մէջ մեծ զայրոյթ կը տիրէ Գերմանիոյ կայսեր դէմ, որ պատերազմի միջոց Սուլթանը, ոչ թէ յանուն մարդասիրութեան շահիւր, որովհետեւ Թուրքիա և մարդասիրութիւն բառերը վերջին ծայր հակասական են, ինչպէս ցոյց տուաւ 300 հազար հայերու կոտորածով—այլ Ռուսո-Գերմանական դաշնակցութիւնը կաշկանդելով անկարող մնայ Սուլթանին վայրագութիւնները պատժել:

Կ. Պոլսէն, Զմիւռնիայէն և այլ թրքական քաղաքներէն ամեն օր զանազան շոգեհաւանքով հաղարաւոր յոյներ ընտանիքներով կը հասնին քաղաքս, Սուլթանը սկսած է հալածել յոյները, ճիշդ այնպէս ինչպէս անցեալ տարի հայերս:

Հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ռուսիա պատրաստ է Կ. Պոլս մըտնել և Անատոլիոյ կողմէն ալ Հայաստանը գրաւել, Աւստրիոյ ալ Մակեդոնիան գրաւել առաջ, եթէ Սուլթանը չի բաղդորէ իրեն առաջարկուած բարենորոգման ծրագիրը: Այս անմեկնելի քաղաքականութեան նըպատակը հասկցուած չէ:

Էթհէմ փաշայի զօրքերը Թեսալիա մտնելով ամեն վայրագութիւններ կատարած են, բայց Վլօրս քաղաքին մէջ մինչև այսօր հանդարտնստած են ի շնորհս եւրոպացի հիւպատոսներու միջամտութեան, այսու հանդերձ Վլօրսի կէս ժամ հեռաւորութեամբ Անո-Վլօրս ըսուած գիւղին մէջ կարապետեան անուն հայ մը

սպաննած են, որ կերելի թէ թուրքերու քաղաք մտած պահուն խոյս տալով հոտ ապաստանած էր:

Սև ծովէն կը գրեն թէ էյնէպօլի թուրքերը զինուած քրիստոնեաները ջարդելու փորձ Երած են պատրուակաւ թէ հայերը Ս. Անտոն գիւղին մէջ թուրքերու վրայ յարձակում Երած են, որ բոլորովին անհիմն է, բայց բարեբախտաբար տեղական իշխանութիւնը վրայ հասնելով զէպքին առաջը առած է:

Եւրոպական տէրութեանց խորհրդով Յոյն կառավարութիւնը կրեւտէն յետ կոչեց իր զօրքերը, որոնց մէկ մասը նախընթաց օր քաղաքս հասաւ:

Աթէնքի յոյն հասարակութիւնը Լարիսայի զօրքերու նահանջումը պալատին և կառավարութեան վերաբերելով, կարգ մը խռովարար անձինք իրենց անսահման զայրոյթէն մի քանի պիտակաճառատներու վրայ յարձակելով կողոպտած էին խանութները, բայց ոստիկանութիւնը վրայ հասնելով կարգապահութիւնը վերահաստատած էր: Եւրոպական թերթերը խնդրոյն մեծ կարեւորութիւն տալով զէպքին ապստամբութեան և յեղափոխութեան կերպարանք տուած են:

Մինչև այսօր զանազան երկիրներէ հասնող հայ կամաւոր զօրքերու թիւը 200ը անցած է, բայց դժբաղդաբար մաս առ մաս գալով 8-10 ական մարդ զանազան օտարազգի խմբերու հետ ընկերացած ըլլալով, չեն կրցած հայկական խումբ մը կազմել և լռիկ մնալի սահմանադրութիւնը հետեւապէս տեղական թերթերն անգամ հայերուն վրայ բան մը գրած չեն: Յոյն հասարակութիւնը թերեւս կը կարծէ թէ մենք հայերս իրենց պատերազմին մասնակցած չենք, ինչպէս օտարազգիք:

Վերջին օրերս Ռումանիայէն և այլ տեղերէ 30-40 հայ կամաւորներ ալ եկան, սակայն բացի թուրքերէն ուրիշ օտար լեզու մը չգիտնալուն համար կառավարութեան ծախքով իրենց տեղերը զրկուեցան:

Քաղաքս լեցուած է կարիպալտեան իտալացի կամաւորներով:

Թուրքերը Լարիսայի մզկիթները մաքրելով Գուրպան պալատը խիստ շքեղ և հանդիսաւոր կերպով տօնած են ամբողջ զօրքերը թափօր կազմած իրենց յաղթութեան համար մաղթանքներ ուղղած են առ Մուհամմէտ և ապա մզկիթէն դուրս գալով հրապարակին վրայ ըստ սովորութեան երեք անգամ կրկնած են «փատիլահըմ չօք եաշա»:

—Հակառակ էթհէմ փաշայի խոստումներուն և եւրոպական հիւպատոսներու միջամտութեան ու աշաւուրջ հսկողութեան՝ Վօլոսի մէջ թուրքերը սկսած են իրենց սովորական ոճրագործութիւնները, սպաննելով 7-8 տեղացի յոյներ՝ որոնք էթհէմ փաշայի փուճ խոստումներուն հաւատ ընծայելով մնացած էին իրենց տեղերը:

Քանի մը օր առաջ Պիրէոնի նամատույցը հասնող ամբարիկեան «Սան

Յրանչիսգո» մարաշնաւը կը պատրաստուի մեկնելու, ուր երթալը յայտնի չէ:

Հինգ Մեծ Տէրութիւններ Բ. Դրան կը ստիպէին զինադադարի առաջարկը ընդունել տալ, Գերմանական կառավարութիւնը թուրքիան պաշտելու համար, պետութեանց դիտել տուաւ թէ իրաւունք ունին թուրքիան համոզելու և ոչ թէ բռնանալու:

Աթէնքի գերմանական դեսպանը զինուորական հիւանդանոցը երթալով այցելեց միայն գերի բռնուած թուրք վիրաւորներէն, առանց անհարկ մը նետելու քրիստոնեայ վիրաւորները վրայ:

Քաղաքիս եւրոպական դեսպանատան բարձր պաշտօնեայ մը գիւշանագէտի մը հետ տեսակցութեան պահուն ըսաւ. «գոնէ իմ կառավարութեանս գաղափարը այն է որ անտարբեր մնայ և ստրկացնէ Յունաստանը այնպէս որ թողու թուրք զօրքերը հասնին մինչև Աթէնք, որպէս զի սովոր Յունաստան և ուրիշ անգամ Արեւելեան մեծ խնդիրներու մէջ չի մղուի:

Եպիքոսի Յոյն զօրաբանակը Արթա քաղաքէն առաջ Ղրիմօվայի առջև վերջին պատերազմին մէջ 528 մեռել և վիրաւորեալ տուաւ:

Պատերազմի ժամանակ թեսալոյ և Եպիքոսի մէջ շատ մը վատ յոյներ էթհէմի համակրութիւնը գրաւելու համար փայլեցան իրենց այլազան մատուցած ծախքերով: Հրտեսութիւնը հայուն տրուած է կ'ըսեն:

Կ'ըսուի թէ թուրք կառավարութիւնը Ռումալոյ թեկադրութեամբ 432 հազար զօրք միայն եւրոպական թուրքերով մէջ համախմբելու ջանքեր կ'ընէ: Այս պատրաստութիւնը կը վերադրուի առաջինայ պատահական եւրոպական պատերազմի մը, որ մօտաւորապէս կը կարծուի:

Թուրք զօրքերը յունական Գառտի քաղաքը գրաւելով ամբողջ խանութները և տները կողոպտեցին ու սպաննեցին վաճառական մը իր ընտանիքին անդամներով, շատ մը գեղեր հրդ ճարակ ըրին:

Թրքական նաւատորմը օր առաջ Տարսանէլէն դուրս գալով առաջ կը խաղային դէպի Յոնիական ծովը, բայց անձանթ պատճառով մը դարձեալ իրենց տեղը վերադարձած են: Ամբողջ թրքական նաւատորմը Գերման սպաններու հրամանատարութեան տակ է:

Պաշտօնապէս կը հերքուի այն լուրը թէ Սուլթանը Պ. Գամպուի հեռագրումը պահանջած է եղբի Գաղղիական կառավարութեանէն:

—Լարիսայի անկումէն յետոյ տեղւոյն բազմաթիւ հրեաները ֆէս կրելով տեղացի յունահպատակ թուրքերու հետ ընկերացած ժամ մը հեռու կ'երթան գիմաւորելու թրքական զօրքերը և ի նպաստ Սուլթանին մաղթանքներ կարդալով մէկտեղ Լարիսա կը մտնեն: Էթհէմ փաշա չափազանց դուժմնացած է վատ հրեաներու այս վարմունքին, զոր ցոյց տուին հայերու ալ Պոլսոյ կոտորածի ատեն:

—Այժմ զինադադարի համար եւրոպացիները կը ջնան, որպէս զի այդ միջոցին խաղաղութեան պայմանները կարգադրուին, այսուհանդերձ թուրք զօրքերը թեսալոյ առանց կողմը թէ՛ Ֆէրիսայի և թէ Տոմորոի ամեն գծերու վրայ փութով կ'աշխատին ամբողջութեամբ չի նել, կ'երեւի թէ՛ թուրք զօրքերը մտադիր են նոր յարձակում ընել յոյներու դէմ: Այս առթիւ Յոյն կառավարութիւնը կամաւոր և նոր կանոնաւոր զօրքեր կը զրկէ սահմանագիծի շարկին իրենց գիւղերը պահպանելու համար:

Ինչպէս վերը ծանուցինք թէ թուրքերը կը պատրաստուին նոր յարձակում ընելու, ահա պատահեցաւ և դժբաղդաբար յոյն զօրքերը Լամիա նահանջեցին: Վախ կայ թէ՛ Գերմանիոյ և Ռումալոյ անկախութեամբ թուրքը մինչև Աթէնք պիտի գայ:

Ի նպաստ Պիրէոնի մի քանի խիստ կարօտ ընտանեակ համար Պ. Ս. Մ. ի ձեռամբ ի Գաշիլէ հանդանակուած է հետեւեալ գումարը.

Արժն. Տ. Գեորգ քահանայ 10 դահեկան, Պարոնայք Լեւոն Գրիգորեան 5, Գեորգ Փափազեան 10, Թ. Թ. 20, Տ. Մ. 20, Սեդրաք Սարգիս 2, Մուրատ Կարօեան 2, Արթին Պօղոսեան 5, Ֆարհատ 5, Հրաչեայ Դուրեան 5: Դուժար 84 դահեկան:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԱՆԳԼԻԱ.—Մէր-Վիլիս, Պ. Արհաւարի հետ զրկած նամակագրութեանը ստացած ենք:

ԱՄՆԻԿԱ.—Լօվէլ, Պ. Հայկակ Ապահուելի: Ձեր բացակայութեան համար թերթերնիդ դադարեցուցինք: —Լօվէլ, Պ. Տ. Վահանեան, Ձեր բացակայութեան համար ստիպուեցանք թերթերնիդ դադարեցնել, հաճեցաք նոր հասցէնիդ տալ մեզի: —Մատիսօս, Պ. Գ. Կ. Գրիգորեան, Ձեր քարթը ստացանք մայիս մէկէն սկսեալ բաժանորդ էք: —Նաւիլ, Պ. Մ. Հաչալեան, մեր հասցէն փոխահել է, թերթերնիդ շարունակաբար պիտի ստանաք:

ՀԱՐԱԿԱՄԻՆԻԱ.—Սանթիա-կօ-ձիլլ, Պ. Պինտան, ըստ Ձեր յանձնարարութեան Ձեր բարեկամին յանձնեցինք մեր նախորդ թիւերը, եթէ կ'ուզէք ստանալ շարունակաբար զրեցէք մեզ:

ՀՆԻԿԱՍՏԱՆ.—Պոմպէյ, Արժն. Հայր Գրիգորեան: Ծնորհակալութեամբ ստացած ենք 5 ֆր. չէքք:

ԵԳԻՊՏՈՍ.—Պ. Սուրին Ձեր հասցէին պատասխանած ենք Ձեզ յԱդէք-սանդրիս, նոր հասցէնիդ կը խնդրուի:

ԳԵՐՄԱՆԻԱ.—Համպուրկ, Պ. Գ. Պալուխեան, Ձեր նամակը ստացանք, մայիս մէկէն սկսեալ բաժանորդ էք, թերթերը պիտի ստանաք:

ՊՈԼԿԱՐԻԱ.—Թաթար-Բազար-ճք, Պ. Ա. Շահրիկեան, նամակդ ստացանք մարտ ամսէն բաժանորդ էք: —Վառնայ, Պ. Մ. Սեդրաքեան, Ձեր վեցամսեայ բաժանեցին փոխարէն փոխանակ 3 ֆր. յունական 3 տրաքաիլ զրկած էք, որ կ'ընէ 1 ֆր. 70 աս. —Վիտին, Պ. Մ. Յ. Զնորհակալութեամբ ստացանք Ձեր նամակն ու բաժանեցինք:

ՌՈՒՄԱՆԻԱ.—Պոլսէլ Պ. Կիրակոս Մինասեան, շնորհակալութեամբ ստացած ենք ձեր բաժանեցինք: —Քէօսթէնէ, Պ. Մ. Գրիգորեան, նամակնիդ ստացած ենք, Ձեր մատուցած ծառայութեանց համար շնորհակալութիւննիս կը յայտնենք:

ԱԶԴ

Ինչպէս յայտնի է մեր թերթերը լոյս կը տեսնեն ամեն ամսի վերջին օրերը, որուն համար քանի մը գանգատագրեր ստացած ենք հեռաւոր երկիրներէ թէ՛ մէկ ամսուան թերթը միւս ամսու վերջերը կը կարդան: Այս անգամ ալ մեր ճամբորդութեան պատճառով որոշ ժամանակէն չաբաթ մըն ալ աւելի ուշ թողուցինք թերթերու հրատարակութիւնը, ասոր համար «Յաւելուած»-ի ճակատը փոխանակ ապրիլի մայիս գրեցինք, իսկ «Միութիւն»-ի մայիս տեղ առաջիկայ թուին վրայ յունիս պիտի գրենք: Այս հաշով ամիս մը զրկանք ըրած պիտի ըլլանք, որով մեր ընթերցողները չմնասկալ կամ տարեկան բաժանեցին փոխարէն դարձեալ պիտի ստանան 6 կամ 12 թերթ. օրինակի համար, փոխանակ իրենց բաժանեցինք մայիսի վերջը լրանալու, յունիսի վերջը պիտի լրանայ: Այսպէս թէ՛ մեր բաժանորդները չեն մնասկալ և թէ՛ մենք այսուհետեւ թերթերը փոխանակ ամիս վերջերը հրատարակելու, պիտի կրնանք ամեն ամսու ըսկիզբէ կանոնաւորապէս ի լոյս ընծայել:

* *

Կ. Պոլսոյ Գումարաւոր թաղէն և Բերա Բանկալթի թաղը Չայր փողոցը բնակող Օննիկ Գալֆանեան 24 տարեկան երիտասարդ ջուժակահարը, այս վերջին ցաւալի դէպքէն իվեր անյայտացած է: Կր խնդրուի Ազն. տղայիններ որ այս երիտասարդին ուր, ողջ կամ մեռած ըլլալը եթէ գիտեն հաճին խմբագրութեանս իմաց տալ:

Յիշեալ երիտասարդին ֆիզիքական կազմն է երկայնահասակ, թուր դէմքով, քթին վրայ ծաղիկ նշաններ, միջակ և սև պերս ունի:

Թէ մեր ճամբորդութեան և թէ տպարանի փոխադրութեան համար մեզ հասած շատ մը նամակներ անպատասխանի թողած ենք, առաջիկայ շաբթուանէ սկսեալ կը խոստանանք պատասխանել:

«Միութիւն»-ի և «Յաւելուած»-ի յաջորդ թիւերը լոյս կը տեսնեն յունիս մէկին:

Վ Ր Ի Պ Ա Կ

«Միութիւն»-ի 10րդ թիւին, շոր-բորդ էջին և առաջին սխառակին մէջ, Պ. Չիքիհանի յօդուածին 16րդ տողին մէջ «քարալին» բառը պէտք է կարդալ «քուրալին»: Միւսոյն յօդուածի նոյն էջին երկրորդ սխառակի 7րդ տողին մէջ, երկու անգամ «մէջ» գրուած է, մէկը աւելորդ է:

